ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ՈՍԿԵՐԻՉ

ԽՈՀԱՐԱՐ

ՕՊԵՐԱՏՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ

ՌԱԴԻՈՄԵԽԱՆԻԿ

ՎԱՐՍԱՀԱՐԴԱՐ

ՓԱՅՏԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՓՈՐԱԳՐՈՂ

**2021-2022**
**ուսումնական տարի**

Լուսաբանում




## Խոհարարական գրքի ստեղծման մրցույթի արդյունքների ներկայացման և հաղթողների պարգևատրման արարողություն

Սեպտեմբերի 7-ին Երևանի Էրեբունի Պլազա Բիզնես Կենտրոնում,Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարար» մասնագիտությամբ ուսանողները մասնակցեցին նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների շրջանում **«Բիզնես և կրթություն – գործընկերություն» հիմնադրամի, Գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում ՄԿՈՒ – Համագործակցության Հարավային Կովկասում» ծրագրի կողմից կազմակերպված «Համեղ, առողջ, յուրահատուկ և անվտանգ սնունդ» խո**րագրով խոհարարական գրքի ստեղծման մրցույթի արդյունքների ներկայացման և հաղթողների պարգևատրման արարողությանը։

Մրցույթի նպատակն էր բարձրացնել երիտասարդների հետաքրքրությունը խահարար մասնագիտության նկատմամբ և նպաստել մասնագիտական կողմնորոշմանը. ինչպես նաև մասնակիցների կողմից ներկայացված լավագույն ուտեստների բաղադրատոմսերով ստեղծել խոհարարական գիրք, որը հետագայում կօգտագործվի որպես խոհարարական օժանդակ ձեռնարկ։

Ուսումնարանն ըստ միավորների հանրագումարի զբաղեցրեց առաջին պատվավոր տեղը, իսկ «Խոհարար» մասնագիտությամբ ուսանողներ Գրիգոր Մարդոյանը և Սամվել Նալբանդյանը «Անվտանգ բաղադրատոմս» անվանակարգում ճանաչվեցին հաղթող։ Որպես մրցանակ ուսումնարանի հինգ ուսանողներ հնարավորություն ստացան մասնակցելու «DargettBrewpub»-ի շեֆ խոհարարի կողմից անցկացված վարպետաց դասին և հյուրասիրությանը։

Միջոցառման ավարտին ուսանողներին ժյուրիի անդամներ. «Բիզնես և կրթություն-գործընկերություն» հիմնադրամի նախագահ՝ Մարինե Ժամկոչյանը, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի տնօրեն՝ Տաթևիկ Գասպարյանը, ԿԳՄՍՆ նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական ուսուցման բաժնի գլխավոր մասնագետ՝ Գոհարիկ Խաչատրյանը, «Բլիզարդ» ՍՊԸ հիմնադիր՝ Արմինե Խաչատրյանը, մաղթեցին նպատակասլացություն և մասնագիտական նորանոր նվաճումներ։

Շնորհավորում ենք մեր դասընկերներին և մրցույթում գրանցած բարձր արդյունքների և «DargettBrewpub» -ի շեֆ խոհարարի կողմից աշխատանքի առաջարկ ստանալու համար։

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Լուսաբանում



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՊՈԱԿ

2020 թվականի Արցախյան պատերազմի օրերին, երբ հայ ժողովուրդը հերթական անգամ պայքարում էր իր գոյության իրավունքի համար, արցախահայերին օգնության ձեռք մեկնեց բարեկամ Ֆրանսիայի «Œuvre d'Orient» (Արևելքի մեծ գործը) կազմակերպությունը:

Բարեգործներն այցելեցին փախստական դարձած, Շիրակի մարզում ապաստանած արցախցի ընտանիքներին, ծանոթացան նրանց առաջնային կարիքներին:

Կազմակերպությունը Գյումրիում որպես համագործակից կառույցներ ընտրեց Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը և «Ընտանիք» կազմակերպությունը:

2021 թվականի հունվարից մեկնարկեց 197  անձանց տրամադրվող սոցիալական աջակցության ծրագիրը, հոգում էին արցախահայերի կեցության, սննդի, կոմունալ, կենցաղային, կրթական և այլ ծախսերը:

Ռոզա Կարապետյանը ծրագրի շահառու է, Գյումրի տեղափոխվել է Արցախի Ավետարանոց գյուղից՝ տարիների աշխատանքով ստեղծած տուն-տեղ թողնելով հայրենի գյուղում:

Ասում է՝ չլինեին ֆրանսիական բարերարների և «Ընտանիք» կազմակերպության աջակցությունը, չէին կարող ոտքի կանգնել ու առաջ նայել:

«Œuvre d'Orient»-ի ներկայացուցիչները, տեսնելով դրական արդյունքը, որոշեցին ֆինանսավորել նաև «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ իրականացվող «Ուսումնական խոհանոց» երիտասարդական ժամանցի սրահի վերակառուցման ծրագիրը:

Սրահը նվիրվեց Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի և «Ընտանիք» ՄԴԱ կենտրոնի 44-օրյա պատերազմում զոհված սաների հիշատակին:

Բարեգործական ճաշարանի բացումը տեղի ունեցավ սեպտեմբերի 16-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում: Նախաձեռնությունն օրհնեց ֆրանսիական «Œuvre d'Orient» կազմակերպության գլխավոր տնօրեն, Ֆրանսիայի Արևելյան կաթոլիկների օրդինարիատի գլխավոր փոխանորդ, եպիսկոպոս Պասկալ Գոլնիշին:

Սրբազան հայրը ջերմ զրույց ունեցավ Արցախից տեղահանված ընտանիքների, զոհված զինծառայողների ծնողների և պատերազմում վիրավորված զինծառայողների հետ. «Ձեր սրտերը, ինչպես որ մերը, կոտրված են, իմացեք՝ մենք ձեզ հետ ենք, հուսով եմ, որ այլևս պատերազմ չի լինի, և երիտասարդներ չեն մահանա: Ձեր տառապանքը փոխհատուցվելու է Արցախի սահմանների ամրացմամբ և անկախության ճանաչմամբ: Վստահ եմ, որ պատմությունը դեռ ավարտված չէ, մենք էլ ձեզ հետ պայքարը պետք է շարունակենք»,- ասաց եպիսկոպոսը:

Բացման միջոցառմանը ներկա էին նաև «Œuvre d'Orient» կազմակերպության գործառնությունների գծով տնօրեն Վինսեն Քայոլին, ծրագրի ղեկավար Էզլաննին Գաբե-Խալեին, ԿԳՄՍՆ փոխնախարար Ժաննա Անդրեասյանը, քաղաքային և մարզային իշխանության ներկայացուցիչներ:

Կարևորելով արցախցի և 44 երիտասարդների համար շարունակաբար իրականացվող սոցիալական, կրթական աջակցության ծրագրերը՝ 44 ԿԳՄՍ նախարարությունը մեդալով պարգևատրեց «Œuvre d'Orient» կազմակերպությանը՝ պարգևը հանձնելով եպիսկոպոս Պասկալ Գոլնիշին: Ֆրանսիական կազմակերպության ծրագրերի ղեկավար Էզլաննին Գաբե-Խալեն և ֆրանսահայ բարերար Արամ Ջաքուլյանի ընտանիքի ներկայացուցիչները ստացան ԿԳՄՍՆ պատվոգրեր: Բարերարներին պարգևներ հանձնվեցին նաև Գյումրու քաղաքապետարանի և Շիրակի մարզպետարանի կողմից:

Միջոցառման ընթացքում պարգևատրվեցին նաև ուսումնարանի և կենտրոնի՝ պատերազմում զոհված սաների ծնողները, ինչպես նաև պատերազմի մասնակից մանկավարժներն ու սաները

Ի դեպ, ուսումնական խոհանոցը ծառայում է նաև ուսումնարանի «Խոհարարական գործ» մասնագիտությամբ ներդրված դուալ կրթական համակարգում սովորող 50 ուսանողների գործնական աշխատանքների կազմակերպմանը: Սաներն իրենց գործնական պարապմունքների համար ստանում են անհրաժեշտ սննդամթերքը, որը պատրաստի արտադրանք դառնալուց հետո տրվում է արցախահայ, ինչպես նաև Շիրակի մարզի անապահով 382 երեխաների:

# «ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱՑՈՒՄ»

## Նկարադարան












## Լուսաբանում




«Ռադիոէլեկտրանային միջոցներիտեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության երրորդ կուրսի ուսանող Արթուր Ջուռնաչյանը և «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության առաջին կուրսի ուսանող՝ Էդգար Կիրակոսյանը սեպտեմբերի 17-19-ը մասնակցեցին «ՀՀ էներգետիկ համակարգի զարգացման հեռանկարները, վերականգնվող էներգետիկան որպես էներգետիկ հիմնախնդիրների լուծման հիմնայուն» խորագրով եռօրյա դասընթացին, որը կազմակերպվել էր Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի և Հանուն Մարդկային Զարգացման ՀԿ-ի կողմից:

***Ուսանողական խորհուրդ***











## Ծրագիր




### «ԱՊՀ 30-ամյակ» խորագրով միջոցառման

**Անցկացման ժամկետը՝** սեպտեմբեր 2021թ

**Մասնակիցներ՝** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողներ

**Նպատակ.**

- ներկայացնել ԱՊՀ կազմավորման պատմությունը, անդամ երկրների համագործակցությունը և ծավալած գործունեությունը,
- գնահատել և արժևորել անդամ պետությունների համագործակցությունը, խաղաղապահի ծավալած գործունեության կարևորությունը,
- նպաստել ուսանողների քաղաքական հասունությունը, նպաստել վերլուծական մտքի զարգացմանը:

**Նախապատրաստական աշխատանքներ.**

- ուսանողների միջոցով ներկայացնել ԱՊՀ անդամ երկրների վերաբերյալ լուսաբանող նյութեր:

**Ընթացք.**

1. ներկայացնել ԱՊՀ ստեղծման պատմությունը,
լուսաբանել ԱՊՀ անդամ երկրների ծավալած աշխատանքը, ԱՊՀ երկրների տնտեսական, քաղաքական արտոնությունները և ռազմավարական ծրագրերի կարևորությունը,

2. տեսանյութի ցուցադրում
3. բանավեճ-քննարկում

**Ակնկալվող արդյունք.**

- ունենալ քաղաքականապես հասուն և գրագետ սերունդ,
- քննարկվող նյութի վերաբերյալ իրենց տեսակետն ունեցող ուսանողներ:

Պատասխանատու՝ Ն. Մանուկյան, Ա. Աղաբաբյան

Լուսաբանում




## ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴԱՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում 2021 թվականի սեպտեմբերի 29-ին անցկացվեց միասնական դաս՝ նվիրված ԱՊՀ-ի կազմավորման 30–ամյակին: Միասնական դասին մասնակցում էին առաջին կուրսի ուսանողները: Միջոցառման նպատակն էր ներկայացնել ԱՊՀ կազմավորման պատմությունը, անդամ երկրների համագործակցությունը, ծավալած գործունեությունը, գնահատել և արժևորել անդամ պետությունների համագործակցությունը՝ խաղաղության պահպանման գործում:

Ցուցադրվեց տեսահոլովակ, որը մանրամասն տեղեկություններ տվեց ԱՊՀ-ի կազմավորման, դրա նպատակի և կազմի մեջ մտնող անդամ պետությունների համագործակցության մասին: Լուսաբանվեց ԱՊՀ երկրների ծավալած աշխատանքը, քաղաքական արտոնությունները և ռազմավարական ծրագրերի կարևորությունը: Դասի ընթացքում ուսանողները թեմայի վերաբերյալ ներկայացրին իրենց կողմից ուսումնասիրած նյութերը: Նշվեց նաև, որ 1993թ. հունվարի 22-ին հաստատվել է ԱՊՀ Կանոնադրությունը: Զուգահեռ համեմատականներ տանելով Կանոնադրության կետերի հետ՝ ծավալվեց քննարկում, որի ընթացքում ուսանողները հայտնեցին իրենց կարծիքները 44-օրյա պատերազմի ընթացքում ԱՊՀ կառույցի դիրքորոշման և վարած գործունեության մասին:

Դասը նպաստեց ուսանողների վերլուծական մտքի զարգացմանը, քաղաքական հայացքների զարգացմանը:

***Կազմակերպիչներ՝ Ն. Մանուկյան, Ա. Աղաբաբյան***

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Ծրագիր




**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

**«Գենդերային հավասարություն»**
**Խորագրով զեկույց**

**Մասնակիցներ**՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողներ

**Անցկացման վայր**՝
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱ

**Ժամանակ**՝ սեպտեմբեր

**Նպատակ**

- Ներկայացնել Գենդերային հավասարություն դերն ու նշանակությունը:
- Ներկայացնել« Գենդերային հավասարություն» հասկացության ուսումնասիրությունը,առաջացման աղբյուրները
- Ներկայացնել Գենդերային հավասարություն սոցիալական դերերը
- Ներկայացնել Գենդերային հավասարության դերը երկրի ժողովրդավարության զարգացման գործում,

**Ընթացք**
Զեկույց- «Գենդերային հավասարություն» թեմայով

**Ակնկալվող արդյունք**
Գենդերային հավասարություն դերն ու նշանակությունը ընկալող, ճանաչող, մարդու իրավունքների և ժողովրդավարության բարձրարժեք նվաճումները կարևորող, պահպանող, արժեվորող, մարդու իրավունքները գնահատող ուսանողներ:

Պատասխանատու՝ Ս. Ավետիսյան




**«Գենդերային հավասարություն»**

2021թ-ի սեպտեմբերի 30-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում տեղի ունեցավ «Գենդերային հավասարություն» խորագրով զեկույց, որին մասնակցեցին ուսումնարանի տարբեր կուրսերի ուսանողները: Զեկուցող՝ «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասախոս Ս. Ավետիսյանը, ուսանողներին ներկայացրեց «Գենդեր» հասկացությունը, բնութագրիչները, որոնք կախված համատեքստից՝ կարող են ներառել կենսաբանական սեռը, առանձնահատկությունները, սեռի հիման վրա առանձնացած սոցիալական կառուցվածքներն ու գենդերային ինքնությունը:
Զեկույցը ընթանում էր «Գենդերային հավասարությունը» լուսաբանող սահիկաշարով, որը պատրաստել էին «Համակարգիչների ՝ օպերատոր համակարգչի» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողները:
Ընդունելով այն փաստը, որ «Գենդեր» եզրույթը համաշխարհային մշակութային խոսույթի անբաժանելի մասն է, ժամանակակից գիտությունը գենդերը սահմանում է՝ որպես պայմանական, գաղափարական կառույց, որում ներառված են այն պատկերացումները, թե ինչ է նշանակում լինել տղամարդ կամ կին՝ տվյալ մշակույթում, և որոնք են նրանց իրավահավասարությանը հասնելու երաշխիքները:
Զեկույցը ծառայեց իր նպատակին՝ ուսանելի էր, ուսանողները յուրացրին գենդերին վերաբերող բնութագրիչների առանձնահատկությունները՝գիտակցելով, որ գենդերային հավասարությունը արդի հասարակության առաջընթացի գրավականն է:

*Հումանիտար մեթոդմիավորում*

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ









## Լուսաբանում




Սույն թվականի հոկտեմբերի 15-ին, «Բիզնես և Կրթություն Գործընկերություն» հիմնադրամը (ԲԿԳ) Գերմանական «Մասնագիտական Կրթություն և Ուսուցում (ՄԿՈւ)-Համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում կազմակերպեց վարպետաց դաս «Կարա Միլվեր» արծաթից պատրաստված հեղինակային աշխատանքների մասնագիտացված սրահ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Ոսկերչություն» մասնագիտության ուսանողների համար: Վարպետաց դասընթացը վարեց սրահի հիմնադիր, ոսկերիչ Կարա Ավետիսյանը:

Սրահը Հայաստանում արծաթից պատրաստված հեղինակային աշխատանքների միակ մասնագիտացված սրահն է՝ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, էմալի, կաշվի, ոսկորի, փայտի համադրությամբ:

Այնուհետև ուսանողները այցելեցին «Սվարովսկի բյուրեղյա պալատ»:

Այցի նպատակն է խթանել երիտասարդների շրջանում ոլորտի նկատմամբ հետաքրքրությունը, ծանոթացնել մասնագիտական դժվարությունների, հնարավորությունների, մարտահրավերների, հեռանկարների և նրբությունների հետ:









ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՊՈԱԿ

## Ամփոփվել են «Հայաստանի հմտություններ 2021» ազգային մրցույթի նախընտրական փուլի արդյունքները

Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարանի «Ոսկերչություն», «Խոհարարական գործ» մասնագիտությունների թվով 15 ուսանողներ հոկտեմբերի 20-ին և նոյեմբերի 6-ին մասնակցեցին «Հայաստանի հմտություններ 2021» ազգային մրցույթի նախընտրական փուլին: Մրցույթին մասնակցում էին Հայաստանի տարբեր ՄԿՈՒ հաստատությունների լավագույն ուսանողները:
Փորձագետները, հաշվի առնելով ոսկերչություն և խոհարարություն մասնագիտությունների որակավորման միջազգային չափանիշները, ըստ արժանվույն գնահատեցին մասնակիցներին:
Ուսումնարանի մասնակից ուսանողներից նախընտրական փուլը հաղթահարեցին՝
«Ոսկերչություն» մասնագիտություն

1. Վարդան Իգորի Գալստյան /երրորդ կուրս/- 100 միավոր
2. Նարեկ Ալբերտի Ջիլիյան /երրորդ կուրս/- 100 միավոր
3. Սամվել Վրեժի Ղազարյան /երկրորդ կուրս/- 91 միավոր
4. Կարլեն Արմենի Շահբազյան /երկրորդ կուրս/- 86 միավոր
5. Արտյոմ Մարտունի Մկրտչյան /երկրորդ կուրս/- 82 միավոր

«Խոհարարական գործ» մասնագիտություն.

1. Արտաշես Արտյոմի Սարգսյան /երրորդ կուրս/- 97 միավոր
2. Զոհրաբ Արամի Գևորգյան /երրորդ կուրս/- 90 միավոր

Հարկ է նշել, որ արդեն ավանդական է դարձել «Համաշխարհային հմտություններ» միջազգային մրցույթին կրթօջախի մասնակցությունը: «Ոսկերչություն» մասնագիտության շնորհալի ուսանողները բազմիցս են արձանագրել դրվատելի հաղթանակներ.
«Համաշխարհային հմտություններ» 2016 թվականի ազգային փուլում ոսկերիչ մասնագիտությամբ Հովհաննես Նազարյանը զբաղեցրել էր պատվավոր առաջին տեղը՝ պարգևատրվելով ոսկե մեդալով, «Հայաստանի հմտություններ» 2018 թվականի ազգային մրցույթն ավելի արգասաբեր էր. ոսկերիչ մասնագիտությամբ Մնացական Գալստյանը առաջին մրցանակին է արժանացել, իսկ Սարգիս Գասպարյանը՝ երկրորդ տեղին՝ պարգևատրվելով ոսկե և արծաթե մեդալներով:
2019 թվականին Մնացական Գալստյանը ՌԴ Կազան քաղաքում Համաշխարհային հմտություններ միջազգային մրցույթում ոսկերչություն մասնագիտությամբ ներկայացրել է Հայաստանը:
Շնորհավորում ենք մեր ուսանողներին և մանկավարժներին՝ ձեռքբերումների համար, մաղթում նորանոր նվաճումներ:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ


worldskills Shanghai
worldskills Armenia
ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ
46-ՐԴ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄՐՑՈՒՅԹ
ՇԱՆՀԱՅ 2022










**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

**Վոլեյբոլի մրցաշար**
**«Լինենք առողջ մարմնով և հոգով»**

**Վայրը՝** «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

**Նպատակը.**
- ապահովել սսովորողների զբաղվածությունը,
- կազմավորել ուսումնարանի հավաքական թիմ,
- ձևավորել թիմային աշխատանքի կարողություններ,
- խթանել հետաքրքրություն վոլեյբոլի նկատմամբ,
- զարգացնել վստահություն սեփական ուժերի նկատմամբ,
- դրսևորել տեխնիկական և տակտիկական գործողությունների ստեղծագործական կիրառում,
- կարողանալ տարբեր իրավիճակներում որոշումներ կայացնել, հաղորդակցվել, համագործակցել,
- ունենալ բավարար ֆիզիկական պատրաստվածություն,
- կարողանալ հանդես բերել ինքնավստահություն և հանդուրժողականություն:

**Ընթացքը.**
**Նախապատրաստական աշխատանքներ.**
- վոլեյբոլի պարապմունքների անցկացում,
- մրցույթի թիմերի հավաքագրում,
- մրցակարգի մշակում /օլիմպիական մրցակարգ/,
- վիճակահանության անցկացում,
- պատվոգրերի պատրաստում:

**Մրցույթի անցկացում**
- մրցույթի մասնակից թիմերի ներկայացում,
- օլիմպիական կանոնակարգի ներկայացում՝ համաձայն վոլեյբոլի կանոնակարգի,
- I, II, III մրցանակային տեղերի գնահատում մրցավարի կողմից,
- համապատասխան պատվոգրերի հանձնում,
- հավաքական թիմի կազմավորում:

**Անհրաժեշտ մարզագույք**
- վոլեյբոլի ցանց,
- վոլեյբոլի գնդակ,
- սուլիչ,
- A4 ձևաչափի թուղթ /պատվոգրերի համար/:

Կից ներկայացվում է մրցաշարի թիմերի ցուցակը:

***Կազմակերպիչ՝ Ն. Սարիբեկյան***

## Լուսաբանում




Հոկտեմբերի 21-ին և 22-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց վոլեյբոլի ներուսումնարանային մրցաշար:
Մրցաշարին պայքարում էին ութ կուրսերի թիմեր:

**1-ին տեղ՝ «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտությամբ հավաքական թիմ**
**2-րդ տեղ՝ «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ» մասնագիտությամբ III կուրս**
**3-րդ տեղ՝ «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտությամբ հավաքական թիմ:**

***Կազմակերպիչ՝ Ն. Սուքիասյան***





## Ծրագիր



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

### Բաց դաս՝ «Մաքուր Հայաստան» խորագրով

**Առարկա՝** աշխարհագրություն

**Թեմա՝ «Անտառի լուռ կանչը»**

**Նպատակը՝**

- ծանոթացնել Հայկական լեռնաշխարհում անտառային գոտու տարածմանը,
- կարևորել անտառը որպես մարդու հետագա գոյատևման պարտադիր պայման,
- ձևավորել էկոլոգիական դաստիարակություն,
- սերմանել բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք:

**Նախապատրաստական փուլ՝**

- նախապես հանձնարարել լրացուցիչ աղբյուրներից հավաքել տեղեկություններ անտառային գոտու, անտառների տեսակների և տարածման վերաբերյալ,
- ըստ հանձնարարված թեմայի՝ պատրաստել ՀՀ վարչական քարտեզ, զեկույցներ և լուսաբանող նյութեր, համապատասխան սահիկաշար:

**Ընթացքը.**

**Մասնակիցները թեման ներկայացնելու են հետևյալ ենթաթեմաներով.**

- Տեղեկատվություն երկրագնդի վրա անտառային գոտու, անտառների տեսակների և տարածման վերաբերյալ:
- Հայաստանի անտառները /տարածումն ու զբաղեցրած մակերեսի կրճատումը/:
- Հայաստանի անտառների պահպանությունը:

Թեման ներկայացնելու ընթացքում մասնակիցները ՀՀ վարչական քարտեզի վրա նշելու են անտառային գոտու տարածումը:

**Անհրաժեշտ պարագաներ՝** շարժական գրատախտակ, մատիտային թղթեր, մարկեր գրիչներ, քարտեզ, սահիկաշար:

**Ակնկալվող արդյունք.**

- ՀՀ անտառների ներկայիս էկոլոգիական ճգնաժամային վիճակին ծանոթ ուսանողներ,
- սեփական երկրի բնության նկատմամբ սրտացավ և ոչ անտարբեր վերաբերմունք ունեցող ուսանողներ,
- անտառների դերը կարևորող ուսանողներ:

**Կազմակերպիչ՝ Ա. Բարոյան**




## Անտառի լուռ կանչը

Հոկտեմբերի 21-ին թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց բաց դաս՝ «Անտառի լուռ կանչը» խորագրով: Բաց դասի մասնակիցներն էին «Համակարգիչների շահագործում» մասնագիտությամբ առաջին կուրսի ուսանողները:

Դասի նպատակն էր ծանոթացնել Հայկական լեռնաշխարհում անտառային գոտու տարածմանը, կարևորել անտառը որպես մարդու հետագա գոյատևման պարտադիր պայման, ձևավորել էկոլոգիական դաստիարակություն, սերմանել բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք:

Դասը սկսվեց Հայաստանի անտառներին բնորոշ ծառատեսակների կանչով՝ ուղղված մարդկությանը: Նրանք մարդկային լեզվով ներկայացրին իրենց հուզող հարցերը՝ ակնկալելով դասի մասնակիցներից ստանալ բավարար պատասխաններ:

Դասի ընթացքում քննարկվեցին կենսոլորտ, անտառը որպես էկոհամակարգ, բիոտիկ և աբիոտիկ գործոններ, օզոնային էկրան ենթաթեմաները և ներկայացվեց անտառը որպես բազմաֆունկցիոնալ, ինքնավերականգնվող լանդշաֆտային համակարգ:

Առանձնահատուկ անդրադարձ արվեց Հայաստանի անտառներին և նրանց պահպանությանը՝ կարևորելով անհատի գիտակցված մոտեցումն ու վերաբերմունքը անտառի պահպանման գործում: Դասին զուգահեռ ցուցադրվում էր թեմային համապատասխան սահիկաշար:

Նպատակային էր հետաքրքիր խնդիրների և առոյթների կիրառումը, որոնք խթանիչ էին մասնակիցների ճանաչողական հետաքրքրությունների զարգացման և ինքնուրույն մտածելակերպի ձևավորման համար:

Դասի ընթացքում հնչում էին անտառին բնորոշ տերևների շրշյունն ու թռչունների դայլայլը, ջրի քչքչոցն ու քամու մեղմ սուլոցը՝ ներկաներին տեղափոխելով անտառի հեքիաթային և առեղծվածային աշխարհ:

***Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորում***

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ









## Ծրագիր



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՊՈԱԿ

**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

### «Ժամանակակից ստեղծագործողները» խորագրով կլոր-սեղան քննարկում

Անցկացման ամսաթիվը՝ 03.05.2022թ.
Մասնակիցներ՝ Ուսանողական խորհուրդ

**Միջոցառման նպատակը.**

- Ներկայացնել բանաստեղծ, արձակագիր ու դրամատուրգ, հրապարակագիր ու հրապարակախոս, խմբագիր ու գրական կյանքի ղեկավար, մշակութային, պետական ու հասարակական գործիչ Վարդգես Պետրոսյանի լայնահուն գործունեության և թողած հզոր ժառանգության կարևորությունը:
- Վերարժևորել Վարդգես Պետրոսյանի ծանրակշիռ, պատկառելի վաստակը գրական-հասարակական կյանքում:
- Դեռահասների շրջանում սերմանել «առված օրերում» զարմանալիորեն տարածված գրքի պաշտամունքը:
- Ստեղծագործ «ժամանակակից» գրող՝ Ռոզա Հովհաննիսյանի հետ հանդիպում, գրական ընթերցումներ, գրական կյանքի ակտիվացում, գրող-ընթերցող կապի ամրապնդում:
- Հեղինակ-ընթերցող կապի ամրապնդման համատեքստում՝ գրքի և գրականության հանրահռչակում:
- Գրական մտքերի փոխանցման հնարավորության ընձեռում:
- Նպաստել ազատ խոսքի տարածմանն ու անկաշկանդ արտահայտմանը:

**Ընթացքը.**

- Բացման խոսք
- Նախամուտք - Մեր արարումի անցած շրջանը կենդանացնող տեսաժապավեն, ուր թե լուսանկարների, թե եղած կինոկադրերի միջոցով արտացոլվում է Վ. Պետրոսյանի ապրած կյանքը՝ անձնական ու հասարակական մոտիվների զուգակցմամբ:
- Վարդգես Պետրոսյանի ժամանակը
  - Ստեղծագործական գործունեությունը,
  - Երկեր:
- Հեղինակ՝ Ռ. Հովհաննիսյանի անդրանիկ ժողովածուի ներկայացում՝ «Դիմագծեր սևի վրա»:
- Հարցեր, հարցեր, հարցեր, որոնց անմարելի ընթացքը հնարավորինս հստակեցնելու միտումով էլ կլոր-սեղան քննարկում /բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյան, գրական ստուդիայի դեռահասներ/:
- Վերլուծություն և ամփոփում:

**Ակնկալվող արդյունքը.**

- Ծանոթացնում բանաստեղծ, արձակագիր, պետական ու հասարակական գործիչ Վարդգես Պետրոսյանի լայնահուն գործունեությանն ու թողած հզոր ժառանգությանը:
- Երիտասարդ ստեղծագործողների և ստեղծագործ «ժամանակակից» գրողի միջև հաղորդակցման հաստատում:
- Պահպանում մեր հոգևոր դաշտի արտացոլումը ժամանակակից գրականության միջոցով ևս:

**Գրադարանավար՝ Ս. Հակոբյան**




## ԵՐԲ ԱՍՏՎԱԾ ԽՈՍԵՑ ՀԱՅԵՐԵՆ

Հայ մշակույթի մեծ տոնի առթիվ հոկտեմբերի 20-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Ուսանողական խորհուրդը կազմակերպել էր ճանաչողական հանդիպում:

Միջոցառման նախամուտքը ազդարարվեց «Որք զարդարեցին» թարգմանչաց շարականով, որից հետո գրադարանավար Սեդա Հակոբյանը, վեր հանելով օրվա ազգային-եկեղեցական տոնի մեծ նշանակությունը, իր խոսքն ուղղեց ուսանողությանը. «Խոսք անոնց համար, որոնք լույս տվին մեզի»:

Ուսանողների խոսքում լսելի էին մեր թարգմանիչների նվիրական անունները, ովքեր ապրում էին մեր մեծասքանչ լեզվի ամեն մեկ խոսքի, ամեն մեկ վանկի լույս հնչյունների մեջ, վերանորոգվում՝ նոր ծնված հայ մանկան հայաշունչ առաջին թոթովանքի, առաջին ճիչի մեջ:

Ուսումնարանի փայտի փորագրման կուրսերի ուսանողների ձեռակերտ ստեղծագործ աշխատանքը ոգեկոչումն էր այն մեծ սերունդի, ովքեր ավելի քան տասնհինգ դար առաջ ծիածանեցին հանճարային այգաբացը մեր աշխարհի վրա և զարդարեցին Ոսկեդարը:

***Գրադարանավար՝ Ս. Հակոբյան***







## Լուսաբանում




Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի թվով 5 ուսանող հոկտեմբերի 31-ին մասնակցեց «Երիտասարդ քաղաքացու Օրագիրը» Case Study/դեպքի ուսումնասիրության միջազգային մրցույթին, որն առնչվում է քաղաքացիական կրթության տարբեր թեմաների, ինչպիսիք են՝ անհատականություն և ինքնություն, մարդու իրավունքներ, քաղաքացիական ազատություն և հավասարություն, ԶԼՄ-ներ, սոցիալական և բնապահպանական արդարություն, խաղաղություն Երկրի վրա, միջազգային անվտանգություն և այլն: Մրցույթին մասնակցում էին Գերմանիայի, Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի, Բելառուսիայի և Ռուսաստանի երիտասարդները:

Հայաստանի Հանրապետության տարբեր ուսումնական հաստատություններից ներկայացրած 33 շարադրանքներից երրորդ կուրսի ուսանող Արտաշես Սարգսյանի դեպքի ուսումնասիրությունը զբաղեցրել է մրցանակային տեղ՝ պարգևատրվել մրցանակով, իսկ երրորդ կուրսի ուսանող Ռազմիկ Հովսեփյանը, երկրորդ կուրսի ուսանող Հովհաննես Համազարյանը, առաջին կուրսերի ուսանողներ Անժելա Գասպարյանը և Արմեն Ավետիսյանը ստացել են դիպլոմներ:

Հաղթող պատմությունները կհրապարակվեն հաղթող դեպքերի հավաքածուի մեջ՝ այլ երկրներից հաղթանակած պատմությունների հետ:

Շնորհավորում ենք մեր ուսանողներին ցուցաբերած ակտիվության, ստեղծագործ մտքի և վաստակած հաղթանակի համար:





## Ծրագիր




### «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ «Ի՞նչ», «Որտե՞ղ», «Ե՞րբ» ինտելեկտուալ խաղ՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան

**Նպատակը.**

1. Նպաստել ուսանողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական մտքի զարգացմանը:
2. Արժևորել նոր գիտելիքների ձեռքբերումը:
3. Զարգացնել ուսանողների թիմային աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակությունը:
4. Կազմակերպել ուսանողների նպատակային ժամանցը:

**Նախապատրաստական փուլ**

Պատրաստել պատվոգիր:

Ընտրել ինտելեկտուալ խաղի հարցերը:

Պատրաստել մասնակցության հայտը և ձևավորել ժյուրիի կազմը:

Ձևավորել թիմեր՝ համապատասխանաբար առաջին, երկրորդ, երրորդ կուրսերից:

**Ընթացքը.**

***I մաս***

Հիմնական փուլ /խաղի անցկացում/

***II մաս***

Արդյունքների ամփոփում

**Արդյունք.**

Տրամաբանական մտածողությամբ զարգացած, թիմային աշխատանքը գնահատող ուսանողներ:

***Կազմակերպիչ՝ Ռ. Պետրոսյան***

Լուսաբանում




## Ինտելեկտուալ խաղ՝ նվիրված ուսանողների միջազգային օրվան

Սույն թվականի նոյեմբերի 17-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց ինտելեկտուալ խաղ՝ նվիրված ուսանողների միջազգային օրվան:
Ինտելեկտուալ խաղի նպատակն էր նպաստել ուսանողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական մտքի զարգացմանը՝ արժևորելով ուսանողի դերը հասարակության մեջ:
Խաղին մասնակցեցին ուսումնարանի առաջին, երկրորդ և երրորդ կուրսերի հավաքական թիմերը:
Մասնակիցները խաղի ընթացքում ցուցաբերեցին մեծ պատրաստա-կամություն, ոգևորություն, արագ կողմնորոշվելու և թիմում լիարժեք աշխատելու ունակություն, ակտիվ մրցակցություն:
Գովելի էր այն հանգամանքը, որ թիմերի կողմից տրված պատասխանները հիմնավորված էին և հարուստ լրացուցիչ տեղեկատվությամբ:
Մինչ միավորների ամփոփումը՝ խաղավարի կողմից հնչեցվեց լրացուցիչ հարցեր դահլիճում ներկա ուսանողներին:
Ըստ հավաքած միավորների հաղթող ճանաչվեց երրորդ կուրսերի հավաքական թիմը:
Խաղն անցավ հակահամաճարակային բոլոր կանոնների պահպանմամբ:
Հաղթող թիմը պարգևատրվեց պատվոգրով:

***Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորում***

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











Լուսաբանում




## Վարպետաց դաս

2021 թվականի նոյեմբերի 22-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց «Գրաֆիկական մոդելավորման ոլորտները» թեմայով վարպետաց դաս՝ <<Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի>> մասնագիտությամբ III կուրսի ուսանողների մասնակցությամբ: Կազմակերպիչ՝ դասախոս Ա. Մարգարյան:

Ուսանողները ցուցադրեցին գրաֆիկական ծրագրերի օգնությամբ ստեղծված հետաքրքիր և գրագետ աշխատանքները, որտեղ առկա էին սովորողների ստեղծագործական միտքն ու մասնագիտական կարողությունների լիարժեք կատարողականությունը: Առավել տպավորիչ էին ՛՛PopArt՛՛ և ՛՛Line Art՛՛ ոճերի ինքնատիպ աշխատանքները, որոնք կառուցված էին հստակ կորերով կառուցված հենքի վրա:

Վարպետաց դասին հրավիրված էր գրաֆիկական մոդելավորման ոլորտի փորձառու մասնագետ Նարինե Խաչատրյանը, ով հակիրճ նկարագրեց գրաֆիկական դիզայնի կիրառումը բազմազան ոլորտներում: Անդրադարձ կատարվեց գովազդային վահանակների, Web կայքերի դիմերեսի նախագծման ու ձևավորման, հրատարակչական գործի, փայտի փորագրությամբ աշխատանքների, կարի արտադրության և տարբեր կազմակերպությունների բրենդավորման գործընթացներում գրաֆիկական դիզայնի օգտագործմանը:

Դասի ավարտին ուսանողներն իրենց հետաքրքրող հարցերի շուրջ ակտիվ քննարկում ծավալեցին, որը արդյունավետ էր, նպատակային և կողմնորոշող:

***Դասախոս՝ Ա. Մարգարյան***